ԻՍԻԴՈՐ ՔԱՐԱԿԱՑՈՒ «ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ»

Իսիդոր Քարակացու հեղինակությամբ մեզ հասած «Պարթևական կայանները» գրվել է մ. թ. ա. I դարի վերջին տասնամյակում։

Պլինիոսի մոտ հիշատակվող Դիոնիսիոսը՝ Միջագետքի Քարաքս Սպասինու քաղաքից, նույն ինքը Իսիդորն է, որին Օգոստոս կայսրը հանձնարարել էր տեղեկություններ հավաքել և հաշվետվություն կազմել մինչև Կայոս Կեսարի՝ Արևելյան գործերը կարգավորելու համար Հայաստան նշանակելը (Plin., VI, 31, 141)։ Իսիդորի աշխատությունը, բացի ճանապարհացույց լինելուց, կարևոր տեղեկություններ է պարունակում մ. թ. ա. III—I դարերի պատմական անցքերի վերաբերյալ, որով և պատմա-աշխարհագրական մեծարժեք աղբյուր է։

Իսիդոր Քարակացու «Պարթևական կայաններից» հունարենից հայերեն թարգմանությունը կատարել ենք Կ. Մյուլլերի հրատարակած տեքստից (K. Müller. Geographi Graeci Minores. Isidori Characeni, Mansiones Parthicae Hildesheim. 1965. հ. I, էջ 244—254), *որին կցված քարտեզը որոշ հատվածներում ճշտել ենք։*

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ΙΣΙΔΩΡΟΥ ΧΑΡΑΚΗΝΟΥ ΣΤΑΘΜΟΙ ΠΑΡΘΙΚΟΙ

1 Διαβαντων τον Εὐφρατην κατὰ το Ζεῦγμα. πόλις εστιν Ἀπαμεια, εἶτα Δαιαρα κώμη. Ἀπέχει δε Ἀπαμειας καὶ του Εὐφράτου ποταμου σχοίνους γ'. Εἶτα Χαρας Σίδου, ὑπὸ δε Ἑλλήνων Ἀνθεμουσιας πολις, σχοινοι ε' μεθ' ἣν Κοραία ἡ ἐν Βατανῃ, ὀχύρωμα, σχοῖνοι γ'. Ἐν δεξιοῖς ταύτης Μαννουορρα Λουρηθ, ὀχύρωμα καὶ κρήνη, ἐξ ἧς ἀρδουσιν οἱ ἐγχώριοι, σχοῖνοι ε'. Εἶτα Κομμισιμβηλα ὀχύρωμα· παραρρεῖ δε ποταμὸς Βιλῆχα, σχοῖνοι δ'. Εἶτα Ἄλαγμα ὀχύρωμα, σταθμὸς βασιλικὸς. σχοινοι γ' μεθ' ὃν Ἴχναι πόλις Ἑλληνίς. Μακεδόνων κτίσμα· κεῖται δ' ἐπι Βαλιχα ποταμου, σχοῖνοι γ'. Εἶτα Νικηφόριον παρ' Εὐφράτην πολις Ἑλληνις, κτίσμα Ἀλεξανδρου βασιλεως, σχοῖνοι ε'. Ἔνθεν παραποταμία Γαλαβαθα, κωμη ἔρημος, σχοῖνοι δ'.

ԻՍԻԴՈՐ ՔԱՐԱԿԱՑՈՒ ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ

I Զևգմա[1] քաղաքի մոտ Եփրատի անցումից հետո գտնվում է Ապամեան[2]։ Հաջորդը Դայարա[3] գյուղն է։ Այն գտնվում է Ապամեայից և Եփրատ գետից 3 սքոյնոս հեռավորության վրա։ Հետո Քարաքս-Սիդեն[4] է, հույների կողմից Անթեմուսիա[5] կոչվող քաղաքը, 5 սքոյնոս։ Սրանից հետո Կորայա[6] ամրոցն է Բատանայում, 3 սքոյնոս։ Դրա աջ կողմում է Մանու-Ուռհա-Ավրեթ[7] ամրոցը և աղբյուր, որով ոռոգում են տեղաբնիկները, 5 սքոյնոս։ Հետո Կոմ-Միսիմբելա ամրոցն է, որի մոտով հոսում է Բիլեխա[8] գետը, 4 սքոյնոս։ Հետո Ալագմա ամրոցն է՝ արքունի կայան[9], 3 սքոյնոս։ Սրանից հետո Իխնայ[10] հունական քաղաքը, մակեդոնացիներից հիմնադրված, գտնվում է Բալիխա գետի մոտ, 3 սքոյնոս։ Հետո Նիկեփորիոն[11] հունական քաղաքն է Եփրատի մոտ, Ալեքսանդր արքայից հիմնադրված, 5 սքոյնոս։ Այնտեղից գետամերձ Գալաբաթա ամայի գյուղը, 4 սքոյնոս։

Εἶτα Χουμβανὴ κώμη, σχοῖνος α'· ἔνθεν Θιλλαδα Μιρραδα, σταθμὸς βασιλικός, σχοῖνοι δ'. Εἶτα Βασίλεια, Ἀρτέμιδος ἱερόν, Δαρείου κτίσμα, κωμόπολις· ἐνταῦθα Σεμιραμιδός ἐστι διώρυξ, καὶ λίθοις πέφρακται ὁ Εὐφράτης, ἵνα στενοχωρούμενος ὑπερκλύζῃ τὰ πεδία· θέρους μέντοι ναυαγεῖ τὰ πλοῖα. Εἶτα Ἄλλαν κωμόπολις, σχοῖνοι δ'· ἔνθεν Βηοναν, Ἀρτέμιδος ἱερόν, σχοῖνοι . Εἶτα Φαλιγα κώμη πρὸς τῷ Εὐφράτῃ· λέγοιτο δ' ἂν ἑλληνιστὶ μεσοπορικόν, σχοῖνοι ς'. Ἀπὸ Ἀντιοχείας ἕως τούτου σχοῖνοι ρκ'· ἐντεῦθεν δὲ ἐπὶ Σελεύκειαν τὴν πρὸς τῷ Τίγριδι σχοῖνοι ρ'. Παράκειται δὲ τῇ Φαλιγα κωμόπολις Ναβαγαθ, καὶ παραρρεῖ αὐτὴν ποταμὸς Ἀβούρας, ὃς ἐμβάλλει εἰς τὸν Εὐφράτην· ἐκεῖθεν διαβαίνει τὰ στρατόπεδα εἰς τὴν κατὰ Ῥωμαίους πέραν. Εἶτα Ἄσιχα κώμη, σχοῖνοι δ'· ἔνθεν Δοῦρα Νικάνορος πόλις, κτίσμα Μακεδόνων, ὑπὸ δὲ Ἑλλήνων Εὔρωπος καλεῖται, σχοῖνοι ς'. Εἶτα Μερραν ὀχύρωμα, κωμόπολις, σχοῖνοι ε'. Εἶτα Γιδδὰν πόλις, σχοῖνοι ε'. Εἶτα Βηλεσὶ Βιβλαδα, σχοῖνοι ζ'. Ἔνθεν νῆσος κατὰ τὸν Εὐφράτην, σχοῖνοι ς'. ἐνταῦθα γάζα ἦν Φραάτου τοῦ ἀποσφάξαντος τὰς παλλακίδας, ὅτε Τηριδάτης φυγὰς ὢν εἰσέβαλεν. Εἶτα Ἀναθὼ νῆσος, κατὰ τὸν Εὐφράτην σταδίων δ', ἐν ᾗ πόλις, σχοῖνοι δ'· μεθ' ἣν Θιλαβοὺς νῆσος κατὰ τὸν Εὐφράτην, ἔνθα γάζα Πάρθων, σχοῖνοι β'. Εἶτα Ἴζαν νησόπολις, σχοῖνοι ιβ'. Εἶτα Ἀείπολις, ἔνθα ἀσφαλτίτιδες πηγαί, σχοῖνοι ις'. Ἔνθεν Βεσηχανα πόλις, ἐν ᾗ ἱερὸν Ἀταργάτι, σχοῖνοι ιβ'. Εἶτα Νεάπολις παρὰ τὸν Εὐφράτην, σχοῖνοι κβ'. Ἔν-

Ապա Խումբանէ գյուղը, 1 սքոյնոս։ Հետո Թիլլադա Միռադա[12] արքունի կայանը, 4 սքոյնոս։ Այնուհետև ապարանք Արտեմիսի տաճարը, Դարեհի կառուցումը[13], գյուղաքաղաք։ Այստեղ Շամիրամի[14] ջրանցքն է, և Եփրատը պատնեշված է քարերով, որպեսզի նեղանալով ողողի դաշտերը, որովհետև ամռանը նավերը նավաբեկվում են։ Հետո Ալլան[15] գյուղաքաղաքն է, 4 սքոյնոս։ Այնտեղից Բեոնան[16], Արտեմիսի տաճարը, 4 սքոյնոս։ Հետո Փալիգա գյուղն է Եփրատի մոտ։ Ասում են, որ դա հունական կանգառ է, 6 սքոյնոս։ Անտիոքիայից մինչև այդտեղ 120 սքոյնոս է։ Այստեղից մինչև Սելևկիա, Տիգրիսի մոտ, 100 սքոյնոս է։ Փալիգայի մոտ գտնվում է Նաբագաթ[17] գյուղաքաղաքը և նրա մոտ հոսում է Աբուրաս[18] գետը, որը թափվում է Եփրատի մեջ։ Այնտեղից [ճանապարհն] անցնում է գետի մյուս կողմում գտնվող հռոմեական ճամբարի[19] միջով։ Հետո Ասիխա[20] գյուղը, 4 սքոյնոս։ Այստեղից Դուրա Նիկանորոս[21] քաղաքը՝ մակեդոնացիների հիմնադրած, որը հույները Եվրոպոս են անվանում, 6 սքոյնոս։ Հետո Մեռան[22] ամրոցը, գյուղաքաղաք, 5 սքոյնոս։ Ապա Գիդան[23] քաղաքը, 5 սքոյնոս։ Հետո Բելեսի Բիբլադան[24], 7 սքոյնոս։ Այստեղից Եփրատն ի վար մի կղզի[25] կա, 6 սքոյնոս։ Այդտեղ գանձատունն էր Հրահատի, որը մորթեց հարճերին, երբ Տրդատը, փախստական լինելով, ներխուժեց[26]։ Հետո Եփրատն ի վար Անաթո[27] կղզին է, որի վրա քաղաք կա, 4 սքոյնոս։ Որից հետո Թիլաբուս կղզին է Եփրատն ի վար, այնտեղ պարթևների գանձարանն է, 2 սքոյնոս։ Հետո Իզան[28] կղզաքաղաքը, 12 սքոյնոս։ Ապա Աիպոլիսն[29] է, ասֆալտի հանքով, 16 սքոյնոս։ Այնտեղից Բեսէխանա[30] քաղաքը, որտեղ Ատարգատիսի տաճարն է[31], 12 սքոյնոս։ Հետո Նեապոլիսը[32] Եփրատի ափին, 22 սքոյնոս։ Եթե անցնեն

θεν διαβαντων τον Εὐφρατην καὶ Ναρμαλιχαν επι Σελευκειαν την προς τω Τιγρειοι. σχοῖνοι θ'. Ἄχρι τουτου Μεσοποταμια καὶ Βαβυλωνια· καὶ ἐ'στιν απὸ Ζευγματος ἄχρι Σελευκειας σχοῖνοι ρκα'.

II Ἐντεῦθεν ἀρχεται ἡ Ἀπολλωνιατις, ἥτις κατέχει σχοινους ιγ'. Ἔχει δὲ κωμας. εν αἷς σταθμος, πολιν δε Ἑλληνιδα Ἀρτεμιτα· διὰ μεσης δε ταυτης ῥεῖ ποταμος Σιλλα. Εἰσὶ δε εις αυτην απο Σελευκειας σχοινοι ιε'. Νυν μεντοι ἡ πολις καλεῖται Χαλασαρ.

III. Ἐντεῦθεν ἡ Χαλωνιτις. σχοῖνοι κα'· εν ἡ κωμαι ε'. εν αἷς σταθμος. πόλις δε Ἑλληνις Χαλα. ἀπο τῆς Ἀπολλωνιατιδος. σχοῖνοι ιε'. Εἶτα απο σχοινων ε' ορος ὁ καλεῖται Ζαγρος. οπερ ορίζει την Χαλωνῖτιν χωραν και την των Μηδων.

IV. Ἐντεῦθεν Μηδία. ἥτις κατέχει σχοινους κβ'. Ἡ ἀρχη αυτων ἡ χωρα Καρινα· εν ᾗ κωμαι ε'. εν αἷς σταθμος. πολις δε οὐδεμια.

V. Ἐντεῦθεν Καμβαδηνη. ἥτις κατεχει σχοινους λα'. εν ᾗ κωμαι ε'. εν αἷς σταθμος. πόλις δε Βαττανα επ' ορους κειμενη· ενθα Σεμιραμιδος αγαλμα καὶ στηλη.

VI. Ἐντεῦθεν ἡ Μηδία ἡ ἄνω. σχοῖνοι λη'· καὶ ἀρχεται ευθυς πολις Κογχοβαρ· ἔνθα Ἀρτεμιδος ιερον. σχοῖνοι γ'. Εἶτα Βαζιγραβαν. ὁ εστι τελωνιον. σχοῖνοι γ'. Εἶτα εις Ἀδραπαναν τα βασιλεια των εν Βατανοις. α Τιγρανης ὁ Ἀρμενιος καθειλε. σχοῖνοι ὁ'. Εἶτα Βατανα. μητροπολις Μηδιας καὶ θησαυροφυλακιον καὶ ιερον. οπερ Ἀναιτιδος· ἀει θυουσιν· σχοῖνοι ·β'. Εἶτα εκης τρεῖς κωμαι. εν αἷς σταθμος.

Եփրատը և Նարմալիխանը[33], այնտեղ Սելևկիան[34] է՝ Տիգրիսի մոտ, 9 սքոյնոս։ Մինչև այստեղ Միջագետքը և Բաբելոնիան է, և Զևգմայից մինչև Սելևկիա 171 սքոյնոս է։

II Այստեղից սկսվում է Ապոլլոնիատիսը[35], որը տարածվում է 33 սքոյնոս։ Ունի գյուղեր, յուրաքանչյուրում կայան և հունական Արտեմիտա[36] քաղաքը, իսկ սրա միջով հոսում է Սիլլա[37] գետը։ Սելևկիայից մինչև այստեղ 15 սքոյնոս է։ Այժմ քաղաքը կոչվում է Խալասար։

III Այստեղից Խալոնիտիսն[38] է, 21 սքոյնոս, որում 5 գյուղ կա, որոնցում կայաններ կան, և Խալա՝ հունական քաղաքը, Ապոլլոնիատիսից 15 սքոյնոս, 5 սքոյնոսից հետո լեռ, որը կոչվում է Զագրոս, վերջինս բաժանում է Խալոնիտիս երկիրը և Մեգերի երկիրը։

IV Այստեղից Մեդիան[40] է, որը տարածվում է 22 սքոյնոս։ Դրա սկիզբն է Կարինա[41] երկիրը, որտեղ կա 5 գյուղ՝ յուրաքանչյուրն իր կայաններով, բայց ոչ մի քաղաք։

V Այստեղից Կամբադենե [երկիրն է][42], որը տարածվում է 31 սքոյնոս, որտեղ կա 5 գյուղ, յուրաքանչյուրում կայան, և Բատանա[43] քաղաքն է լեռան վրա փռված։ Այնտեղ [գտնվում են] Շամիրամի[44] արձանն ու կոթողը։

VI Այստեղից Վերին Մեդիան[45] է, 38 սքոյնոս [տարածությամբ] և սկսվում է Կոնկոբար[46] քաղաքով. այնտեղ է գտնվում Արտեմիսի տաճարը, 3 սքոյնոս։ Հետո Բազիգրաբան[47], որը մաքսատուն է, 3 սքոյնոս։ Հետո դեպի [էկ]բատանայում [գտնվող] Ադրապանան[48] ապարանքը, որը Տիգրան Հայը կործանեց, 4 սքոյնոս։ Հետո [էկ]բատանա[49]՝ Մեդիայի մայրաքաղաքը, ուր [գտնվում են] գանձարանը և տաճարը, որտեղ միշտ զոհ են մատուցում Անահիտ [աստվածուհուն], 12 սքոյնոս։ Հետո երեք գյուղ, նրանցից յուրաքանչյուրում՝ կայան։

VII. Ἐντεῦθεν (Ῥαγιανῆ) Μηδία, σχοῖνοι (νη΄). Ἐν ᾗ κῶμαι ι΄, πόλεις δὲ ε΄. Ἀπὸ σχοίνων ζ΄ Ῥάγα καὶ Χαρᾶς, ὧν μεγίστη τῶν κατὰ τὴν Μηδίαν ἡ Ῥάγα. Εἰς δὲ τὴν Χαρακα πρῶτος βασιλεὺς Φραάτης τοὺς Μαρδοὺς ὠκισεν· ἔστιν ὑπὸ τὸ ὄρος, ὃ καλεῖται Κάσπιος, ἀφ' οὗ Κάσπιαι πύλαι.

VIII. Ἐντεῦθεν ὑπερβάντων τὰς Κασπίας πύλας ἐστὶν αὐλῶν καὶ ἡ Χοαρηνή, (σχοῖνοι ιθ΄)· ἐν ᾗ Ἀπαμεία πόλις ἀπὸ σχοίνων ο΄· κῶμαι δὲ δ΄, ἐν αἷς σταθμός.

IX. Ἐντεῦθεν Κομισηνή, σχοῖνοι νη΄, ἐν ᾗ κῶμαι η΄, ἐν αἷς σταθμός· πόλις δὲ οὐκ ἐστιν.

X. Ἐντεῦθεν Ὑρκανία, σχοῖνοι ξ΄, ἐν ᾗ κῶμαι ια΄, ἐν αἷς σταθμοί.

XI. Ἐντεῦθεν Ἀσταυηνή, σχοῖνοι ξ΄, ἐν ᾗ κῶμαι ιβ΄, ἐν αἷς σταθμοί· πόλις δὲ Ἄσακα, ἐν ᾗ Ἀρσάκης πρῶτος βασιλεὺς ἀπεδείχθη· καὶ φυλάττεται ἐνταῦθα πῦρ ἀθάνατον.

XII. Ἐντεῦθεν Παρθυηνή, σχοῖνοι κε΄, ἧς αὐλῶν· Παρθαύνισα ἡ πόλις ἀπὸ σχοίνων ς΄· ἐνθα βασιλικαὶ ταφαί· Ἕλληνες δὲ Νίσαιαν λέγουσιν. Εἶτα Γάθαρ πόλις, ἀπὸ σχοίνων ζ΄. Εἶτα Σίρωκ πόλις ἀπὸ σχοίνων ε΄. Κῶμας δὲ οὐκ ἔχει πλὴν μιᾶς, ἥτις καλεῖται Σαφρί.

XIII. Ἐντεῦθεν Ἀπαυαρκτικηνή, σχοῖνοι κζ΄· ἐν ᾗ πόλις Ἀπαυαρκτική. Εἶτα Ῥαγαῦ πόλις καὶ κῶμαι δύο.

XIV. Ἐντεῦθεν Μαρδιανή, σχοῖνοι λ΄. Ἔνθα Ἀντιόχεια ἡ καλουμένη Ἔνυδρος· κῶμαι δὲ οὐκ εἰσίν.

VII Այստեղից Ռագիական Մեդիան[50] է, 58 սքոյնոս։ Որում 10 գյուղ կա, 5 քաղաք։ 7 սքոյնոսից հետո Ռագա[51] և Քարաքս, որոնցից Ռագն Մեդիայի խոշորագույն քաղաքն է։ Քարակի մոտերքը առաջին անգամ Հրահատ արքան մարդերին[52] բնակեցրեց լեռան ստորոտում, որը կոչվում է Կասպիական, որից Կասպիական դռներ [անունը]։

VIII Այստեղից՝ անցնելով Կասպիական դռները, կիրճ կա և Խոարենե[53] [երկիրն է], [19 սքոյնոս]։ Այստեղ է Ապամեա[54] քաղաքը, 4 սքոյնոս։ Ունի 4 գյուղ և յուրաքանչյուրում կայան։

IX Այստեղից Կոմիսենե[55] [երկիրն է], 58 սքոյնոս, որում 8 գյուղ և յուրաքանչյուրում կայաններ, սակայն քաղաք չկա։

X Այստեղից Հիրկանա[56] [երկիրն է], 60 սքոյնոս, որում 12 գյուղ և յուրաքանչյուրում կայան։

XI Այստեղից Աստավենե[57] [երկիրն է]. 60 սքոյնոս, որում 12 գյուղ և յուրաքանչյուրում կայան, իսկ քաղաքը Ասաակ[58], որտեղ Արշակը առաջինն էր, որ արքա հռչակվեց և այնտեղ պահպանվում է հավերժական կրակը։

XII Այստեղից Պարթավենե[59] [երկիրն է], 25 սքոյնոս, անցուղի։ Վեցերորդ սքոյնոսից [գտնվում է] Պարթավնիսա քաղաքը, այնտեղ են գրտնվում արքայական գերեզմանները։ Հույները այն անվանում են Նիսա[60]։ Հետո վեց սքոյնոսից Գաթար[61] քաղաքը։ Ապա Սիրոկ[62] քաղաքը 5 սքոյնոսից։ Բացի մեկ գյուղից, որը Սափրի է կոչվում, այլ գյուղ չունի։

XIII Այստեղից Ապավարկտիկենե[63] [երկիրն է], 27 սքոյնոս, որում Ապավարկտիկե[64] քաղաքն է, հետո Ռագա[65] քաղաքը և երկու գյուղ։

XIV Այստեղից Մարդիանե[66] [երկիրն է], 30 սքոյնոս։ Այնտեղ Անտիոքոսն է[67], որը կոչվում է Էնուդրոս, սակայն գյուղ չկա։


40
44
48
52
56
60
64
38
34
30
Կասպից
(Կրհանոց)
ծով
Դերբենդ
Բաքու
Սալյան
Ղարա-Սուրան
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ

XV. Ἐντεῦθεν Ἄρεια, σχοῖνοι λ΄. Ἔνθα Κανδακ πόλις καὶ Ἀρτακαύαν πόλις καὶ Ἀλεξάνδρεια ἡ ἐν Ἀρείοις· κῶμαι δὲ δ΄.

XVI. Ἐντεῦθεν Ἀναύων χώρα τῆς Ἀρείας, σχοῖνοι νε΄. ἐν ᾗ πόλις μεγίστη Φρὰ καὶ Βὶς πόλις καὶ Γαρὶ πόλις καὶ Νιὴ πόλις· κώμη δὲ οὐκ ἔστιν.

XVII. Ἐνθεῦθεν Ζαραγγιανή, σχοῖνοι κα΄. Ἔνθα πόλις Πάριν καὶ Κοροκ πόλις.

XVIII. Ἐντεῦθεν Σακαστανὴ Σακῶν Σκυθῶν, ἡ καὶ Παραιτακηνή, σχοῖνοι ξγ΄. Ἔνθα Βαρδα πόλις καὶ Μὶν πόλις καὶ Παλακεντι πόλις καὶ Σιγαλ πόλις· ἔνθα βασίλεια Σακῶν· καὶ πλησίον Ἀλεξάνδρεια πόλις (καὶ πλησίον Ἀλεξανδρόπολις πόλις)· κῶμαι δὲ ἕξ.

XIX. Ἐντεῦθεν Ἀραχωσία, σχοῖνοι λς΄. Ταύτην δὲ οἱ Πάρθοι Ἰνδικὴν Λευκὴν καλοῦσιν· ἔνθα Βιυτ πόλις καὶ Φαρσανα πόλις καὶ Χοροχοαδ πόλις καὶ Δημητριὰς πόλις· εἶτα Ἀλεξανδρόπολις, μητρόπολις Ἀραχωσίας· ἔστι δὲ Ἑλληνίς, καὶ παραρρεῖ αὐτὴν ποταμὸς Ἀραχωτός. Ἄχρι τούτου ἐστὶν ἡ τῶν Πάρθων ἐπικράτεια.

XV Այստեղից Արեա[68] [երկիրն է], 30 սքոյնոս։ Այնտեղ Քանդակ և Արտակավան քաղաքներն են և Արեայի Աղեքսանդրեան, ունի 4 գյուղ։

XVI Այստեղից Արեայի, Անաուի[69] երկիրն է, 55 սքոյնոս, որում խոշորագույնը Փրա[70] քաղաքն է։ Ապա Բիս, Գարի և Նիէ[71] քաղաքներն են, սակայն գյուղ չկա։

XVII Այստեղից Զարանգիա[72] [երկիրն է], 21 սքոյնոս։ Այնտեղ Պարին և Կորոկ քաղաքներն են։

XVIII Այստեղից Սակական ցեղերի Սակաստանն է[73], որը նաև Պարայտակենե[74] [երկիրն է], 63 սքոյնոս։ Այնտեղ Բարդա, Մին, Պարակենտի և Սիգալ քաղաքներն են։ Այնտեղ սակերի պալատն է և մոտակայքում Աղեքսանդրեա քաղաքը[75] [և մոտակայքում Աղեքսանդրուպոլիս քաղաքը]։ 6 գյուղ կա։

XIX Այստեղից Արաքոսիա[76] [երկիրն է]. 36 սքոյնոս, որը պարթևները անվանում են Հնդկական Սպիտակ։ Այնտեղ Բիյուտ, Փարսանա, Խորոխադ և Դեմետրիաս քաղաքներն են։ Հաջորդը Արաքոսիայի մայրաքաղաք Աղեքսանդրուպոլիսն է[77]։ Այն հունական քաղաք է, որի մոտով հոսում է Արախոտոս գետը։

Մինչև այստեղ է տարածվում պարթևների գերիշխանությունը։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զևգման գտնանց էր Եփրատի վրա։ Ճանապարհը, որը անցնում էր այս քաղաքի միջով, ուներ ինչպես առևտրական, այնպես էլ ռազմական նշանակություն և Հին Աշխարհի հաղորդակցության հիմնական հանգուցակետերից մեկն էր։ Այս ճանապարհի ռազմա-տնտեսական մեծ նշանակության մասին է խոսում նաև այն փաստը, որ դեպի Պարթևների երկիր կատարվող արշավանքները տեղի են ունեցել մեծ մասամբ այս տեղերով։ Հատկանշական է Հ. Մանանդյանի այն ենթադրությունը, որ ըստ երևույթին, Տիգրան Բ-ի կողմնակիցներն են եղել Անտիոք քաղաքը և միջազգային տարանցիկ առևտրի հետ կապված վաճառականները, որոնց համար նպատակահարմար էր, որպեսզի Տիգրանը Ասորիքը Անտիոք քաղաքով միացներ Հայաստանին։ Տիրելով Միջագետքին, նա կտրբեր նաև Զևգմայի վրայով անցնող համաշխարհային գլխավոր ճանապարհին (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 153)։ Այստեղից պարզ երևում է Զևգմայի մեծ նշանակությունը որպես հանգուցակետ նաև Հին Հայաստանի համար։

2. Այս քաղաքը չի կարելի շփոթել Ստրաբոնի մոտ հիշատակվող Ապամեայի հետ, որը Սելևկոս Ա. Նիկատորը (մ. թ. ա. 312—280 թթ.) կառուցեց Օրոնտեսի ափին և անվանեց իր կնոջ անունով (Strabo, XVI, 2, 4)։ Ստրաբոնը Զեգմայի մոտակայքում Ապամեա քաղաք չի հիշատակում, այլ Սելևկիա անունով մի ամրոց (Σελευκείαν φρούριον τῆς Μεσοποταμίας προσωρισμένον ὑπὸ Πομπήϊον τῇ Κομαγηνῇ), որը Պոմպեոսը միացրեց Կոմմագենեին (Strabo, XVI, 2, 3)։ Ըստ Պլինիոսի, Ապամեա և Զեգմա քաղաքները, նրանց կապող կամուրջով, կառուցվել են Սելևկոսի կողմից (Plin., NH, V, 20, 86)։ Սակայն, ինչպես մեզ հայտնի է, այդ տեղերում թե՛ քաղաքները, և թե՛ գետանցը հայտնի են եղել ավելի հին ժամանակից, ուստի Սելևկոսը պետք է որ միայն վերակառուցած լիներ այդ շինությունները։ Այն համապատասխանում է այժմյան Հերեկիկ բնակավայրին։

3. Համապատասխանում է Tabula Peuting. և Geogr. Rav., (II, 13) մեջ հիշատակվող Thiar կոչվող բնակատեղին, որը գտնվում էր Զեգմայից ոչ հեռու և համապատասխանում էր Դայարա գյուղի տեղադրությանը։ Այժմյան անունն է Խան-Թեփե։

4 և 5. Քարաքս Սիդեի տեղադրությունը որոշելու համար պետք է ուշադրություն դարձնել հենց իր՝ Խիդոր Քարակացու հիշատակությանը Անթեմուսիայի մասին։ Ստրաբոնը Անթեմուսիայի դիրքը ավելի որոշակի է տալիս Եփրատի (τοῦ Εὐφράτου κατὰ τὴν Ἀνθεμουσίαν ἐστὶν αὐτοῖς, τόπον τῆς Μεσοποταμίας) և Արորա (Արևմտյան Խարուբ) գետերի մոտ (περὶ τὴν Ἀνθεμουσίαν Ἀβόρρας ποταμὸς ῥεῖ) (Strabo, XVI, 1, 27)։ Այժմ այս տեղում Սարոգ (միջնադարյան Սրուճ) բնակավայրն է (K. Müller, նշվ. աշխ., էջ 246։ Տե՛ս նաև E. Honigmann, A. Maricq Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxell. 1953, էջ 162)։ Հայկական աղբյուրներում Խրաչ անունը մի այլ տեղ հանդիպում է Քարաք (Քերեկ) ձևով (տես՝ Միքայել Ասորի, Ժամանագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 490, 497, 501 և 525)։

6. Κεραια ἡ ἐν Βατανῇ, ինչպես Նյոլդեքեն ենթադրում է համապատասխանում է ասորերեն q'ritha de Batnan (Տե՛ս A. Gutshmid, Königreichs Osroëne. St.-Peterburg, 1887 էջ 23)։

7. Այս նշանակում է Մանուի Ուռհա քաղաք։ Ուռհան (հայերեն՝ Եդեսիա, ասորերեն՝ Օռհայ, արաբերեն՝ Ռուհա) Օսրոյենեի ամենանշանավոր կենտրոնն էր, որը թագավորության մայրաքաղաքն էր։ Սակայն մեզ հետաքրքրող քաղաքը ոչ թե Եդեսիա—Ուռհան է, այլ Մանու թագավորի կողմից կառուցված քաղաքը, որն իր անունով է կոչվել ի տարբերություն մյուս Ուռհայի։ Ուռհա ամրոց-քաղաքը Մանու Գ-ի (28—10) կամ Մանու Դ-ի (1—7) համար մի կարևոր քաղաք է եղել (A. Gutschmid. Königreichs... էջ 23), որտեղ թերևս գտնվում էր նրա արքունի կայանը։

8. Βελιχα հմմտ. հաջորդ պարբերությունում Βαλιχα, որ Բալիքես գետն է։

9. Ինչպես Հերոդոտն է նշում, բացի սովորական կայաններից, կային նաև թագավորական կայաններ, որոնք տարբերվում էին նախորդներից (Herod., V, 52)։

10. Այս քաղաքը մակեդոնական գաղթավայր էր և այդպես էր կոչվում, ըստ երևույթին, Թեսալիայի Ἴγγαι քաղաքի անունով (Strabo, IX. 5, 14)։

11. Պլինիոսի մոտ Նիկեփորիոնի մասին մի հիշատակություն կա. In vicinia Euphratis Nicephorium, quod diximus, Alexander jussit condi propter loci opportunitatem (Plin., VI, 30, 119)։ Հմմտ. Νικηφόριον (Ptol. V, 18, 6)։ Կալիննիկոնը (այսինքն՝ Նիկեփորիոնը), հիշատակվում է իբրև միջազգային առևտրական փոխանակության երեք կենտրոններից (Արտաշատի և Մծբինի կողքին) մեկը (տե՛ս Я. А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954, էջ 108)։

12. Թիլլադա Միրրաղան գտնվել է Աբոու Զելրի վայրում, որի տեղում հին ամրություն է եղել։

13. Այս կայանի հակառակ կողմում գտնվում է Հալեբի Զելերին։ Հետագայում Արտեմիսի սրբավայրի տեղում առաջ է եկել քաղաք, որը Զենորիա թագուհու անունով (267—272) կոչվել է Զենորիա։

14. Շամիրամի ջրանցքը փորված է եղել Զենորիա քաղաքի դիմացի կողմում, որի հետքերը մինչև այժմ պահպանվել են։ Այդ ջրանցքը ձգվում է խարուր գետի ուղղությամբ։ Շամիրամի ջրանցքը օգտագործվել է ինչպես ոռոգման, այնպես էլ հաղորդակցության համար։

15. Այան գյուղաքաղաքի տեղադրությունը ըստ տարածության համապատասխանում է այժմյան Շեյխ-Հասան բնակավայրին (K. Müller, նշվ. աշխ. էջ 247)։

16. Բեռնան գտնվել է այժմյան Դեյր քաղաքի մոտակայքում։ Հմմտ. Βεανα կամ Βιανα

Ptol., V, 20, 7)։ Դեյրից ոչ հեռու, գետի ափին այժմ գտնվում է Binyah գյուղը, որն ըստ երևույթին համապատասխանում է Բեռնային (K. Muller, նշվ. աշխ., էջ 248)։

17. Նարագաթը գտնվում էր պատմական Փալիգայի և այժմյան Բուսեյրայի միջև։ Սա չի համապատասխանում Պտղոմեոսի Բանախա քաղաքին (Ptol., V, 19, 7), քանի որ վերջինս գտնվում էր Բաբելոնից հարավ։

18. Ἀβούρας, հմմտ. Ἀβόρρας (Strabo, XVI, 1, 27, նաև Procopius. Bell. Pers., II, 5); Ἀβώρας (Zosimus, III, 13); Aboras (Ammian., XIV, 3; XXIII. 5) Ἀβῶρα (Theophilactus Simoc., III, 10. 25); Χαβώρας (Ptol., V, 18. 3)։ Այժմ այս գետը նույնպես կոչվում է Խաբուր կամ Արևմտյան Խաբուր՝ ի տարբերություն Արևելյան Խաբուրի։

19. Այս շրջանով հռոմեական զորքերը շատ անգամ են անցել։ Հիշատակվող ճամբարը նրանց կանգառներից մեկն է եղել։

20. Ἄσιγα (El-Sisa. K. Muller, նշվ. աշխ., էջ 248)։ Այս ճանապարհին, նախորդ կետից չորս սքոյնոս հեռավորության վրա գտնվել է Zaitha բնակավայրը (Zosimus, III, 14; Ammian., XXIII, 5, 7)։

21. Դուրա-Եվրոպոսի տեղում կատարված հնագիտական պեղումները (The Excavations at Dura-Europos. Preliminary Reports I-IX New Haven. 1929—1955) ցույց են տվել, որ պարթևական ժամանակաշրջանում դոյություն են ունեցել ամենից բարենպաստ պայմանները այս քաղաքի զարգացման համար (տե՛ս նաև M. T. Rostovtzeff, Dura-Europos and Its Art. Oxford, 1938, էջ 20)։ Դուրա-Եվրոպոսը գոյություն է ունեցել դեռևս նախապարթևական ժամանակաշրջանում։ Պարթևների օրոք այն շարունակել է գոյություն ունենալ իբրև ինքնավար քաղաք՝ պոլիս։

22. Մեռանը գտնվել է այժմյան Սադա բնակավայրի տեղում (K. Muller, նշվ. աշխ., էջ 248)։

23. Գիդդանը համապատասխանում է այժմյան էլ-Էգգին կամ Սուլթան-Աբդալահին (K. Muller, նշվ. աշխ., էջ 248)։

24. Հետաքրքրականն այն է, որ չի նշվում այս բնակավայրի գյուղ, գյուղաքաղաք կամ քաղաք լինելը։ Պտղոմեոսի մոտ այս տեղում գտնվում էր Βανάθη բնակավայրը (Ptol., V, 18, 6)։ Բելեսի Ռիբլադան համապատասխանում է ժամանակակից Խեղշուր-Ռահաբ բնակավայրին (K. Muller, նշվ. աշխ., էջ 248)։

25. Այս կղզին այժմ Կոհա է անվանվում։

26. Այստեղ խոսքը պարթևական թագավորներ Տրդատ Բ-ի (մ. թ. ա. 31—25 թթ.) և Հրահատ Դ-ի (մ. թ. ա. 38—2 թթ.) մասին է։ Մ. թ. ա. 30 թ. Հրահատ Դ-ի թագավորության ժամանակ Տրդատ Բ-ը, հենվելով հռոմեացիների օգնության վրա, մի քանի անգամ գավթեց Միջագետքը և դրանով Հրահատ Դ-ին դժվար կացության մեջ դրեց։ Հրահատ Դ-ը վերջիվերջո ստիպված էր դիմելու արևելյան ցեղերին, որոնց անտիկ դրականության մեջ սկյութներ ընդհանուր անունն են տալիս և որոնք, հավանաբար, սակերն էին (Իսիդոր Քարակացին նույնպես հիշատակում է սքրանց)։ Մ. թ. ա. 27—26 թթ. պայքարը ավելի ուժեղ բնույթ ստացավ, դա հաստատելու են գալիս դրաքմաները, որոնք կտրեցին այս երկուսը Միջագետքում։ Ըստ երևույթին, Իսիդորի հիշատակությունը կղզու վրա տեղի ունեցած իրադարձությունների մասին վերաբերում է հենց այս պատմական դեպքերին։ Այս ժամանակվանից հետո այլևս ոչ մի տեղեկություն չկա Տրդատ Բ-ի մասին։ Հրահատ Դ-ին հաջողվեց վերահաստատել իր իշխանությունը երկրում (ավելի մանրամասն տե՛ս М. М. Дьяконов. Очерки истории древнего Ирана, М., 1961, էջ 218—219, 393)։

27. Անաթո կղզին այժմյան Անահին է համապատասխանում (H. Kiepert, Atlas. Ancient World tab. IV)։ Պտղոմեոսի մոտ այս տեղը հիշատակվում է որպես Βηθ-ανα (beth սեմական բառ է, որը նշանակում է բնակավայր)։ Հմմտ. Anatham munimentum... quod ut pleraque alia circumluitur fluentis Euphratis. (Ammian., XXIV, 1, 6)։ Հիշատակություն կա նաև Theophilactus Simoc. (IV, 10; V, 1 — τὸ Ἀνάθων φρούριον) մոտ։ Սակայն վերջինս այդ քաղաքը, որ այդ ժամանակ ամրոց էր, տեղադրում է Կիրկեսիայի մոտ, այնինչ նա Կիրկեսիայից բավական հեռավորության վրա է գտնվում, Եփրատի հոսանքն ի վար։

28. Այդ տարածությունը տանում է դեպի մի կղզու վրա գտնվող էլ-Ուզ քաղաքը, որը, ինչպես Ռիտտերն է ենթադրում, համապատասխանում է պատմական Իզան քաղաքին (Ritter. XI, էջ 738, տես՝ K. Müller, նշվ. աշխ., էջ 249)։

29. Աիպոլիսը համապատասխանում է կենտրոնական Միջագետքի այժմյան Հիթ բնակավայրին։

30. Բեսեխանան, ինչպես Մյուլլերն է ենթադրում, համապատասխանում է Բեզաղ քաղաքին (K. Muller, նշվ. աշխ., էջ 249)։ Պարսկերենում, ինչպես և հայերենում (Մ. Խոր., Բ, 45) խան նշանակում է իջևանատուն, քարվանսարա (Հ. Աճառյան, Արմ. բառ., հատ. Գ, էջ 364)։

31. Ատարգատիս անունը, ինչպես վկայում է Ստրաբոնը, Ափարա անվան աղավաղված ձևն է. Քոեսիասն անվանում է «Դերկետո» (Strabo, XVI, 4, 27)։ Ատարգատիսը Ասորիքում (Strabo, XVI, 1, 27) և Դերկետոն այնտեղ և Փյունիկիայում նույնն էին, ինչ որ Աստղիկը Հայոց պանթեոնում։ Տարբեր ժամանակներում Արևելքում եղել է պտղաբերության և սիրո, ինչպես և ջրի դիցուհու պաշտամունքը (տե՛ս Մ. Արևզյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 63)։

32. Միտտերը Նեապոլիսը տեղադրում է Մագդանի շրջակայքում (Ritter, XI, էջ 782)։ Ըստ Մյուլլերի (K. Muller, նշվ. աշխ., էջ 249) Մաղդանը գտնվում է այն վայրում, որը Պտղոմեոսը անվանում է Θελζεγχανη (Ptol., V, 20, 6).

33. Ինչպես Պլինիոսն է վկայում, պրեֆեկտոս Գոբարեսը Եփրատից անջատեց մի ջրանցք, որով նա նպատակ ուներ հեռացնել Եփրատի ջրերը վարարումների ժամանակ, որպեսզի Բաբելոնը ջրհեղեղի վտանգին չենթարկվի։ Եվ այս նարմալխան անունը հայտնի է եղել ասորեստանցիների մոտ, որը նշանակել է Բագավորական գետ։ Պլինիոսը նշում է նաև, որ Եփրատի և ջրանցքի հանգուցակետում Ագրանիս անունով մի շատ մեծ քաղաք է եղել, որը պարսիկները քանդեցին (Plin., VI, 30, 120)։

34. Սելևկոս Ա-ն կառուցեց Սելևկիան Տիգրիսի վրա, որը Ալեքսանդրիայի և Անտիոքի կողքին եղել է հելլենիստական աշխարհի խոշորագույն կենտրոնը։

35. Ապոլլոնիատիսը ավելի հնում կոչվել է Սիտակենե (Strabo, XI, 13, 6, XV, 3, 12)։ Հմմտ. Σιττακηνη (Ptol., VI, 1, 2)։ Ըստ երևույթին, Ապոլլոնիատիս է անվանվել այն շրջանը, որը ավելի հնում կազմել է Սիտակայի հյուսիսային մասը, քանի որ թե՛ Ստրաբոնի, և թե՛ Պտղոմեոսի նշված աշխատությունների մեջ հիշատակվում է նաև Սիտակեի շրջանը Սիտակ քաղաքով, որը գտնվել է Բաբելոնի, Սուսիանայի և Ապոլլոնիատիսի միջև (Strabo, XVI, 1, 17., Ptol., VI, 1, 6)։

36. Ստրաբոնը վկայում է, որ Արտեմիտան նշանավոր քաղաք էր, գտնվում էր Սելևկիայից 500 ստադիոն հեռավորության վրա (Strabo, XVI, 1, 17)։

37. Սիլլա գետը այժմյան Դիալա գետն է։ Հմմտ. Dialas (Ammian. XXIII, 6)։

38. Խալոնիտիսը հիշատակվում է մի շարք հեղինակների մոտ (Strabo, XI, 14, 6. Plin., VI, 30 122; Polyb., V, 54); Սակայն Ստրաբոնի մոտ տեղ է գտել մի անճշտություն։ Գորդիենեի, այսինքն Կորգվաց աշխարհի տեղը ճշտորեն որոշելով, ասում է, որ Տիգրիսը գետնի տակից դուրս է գալիս նրա մոտ, միաժամանակ նշելով, որ գետը դուրս է գալիս Խալոնիտիսի մոտ։ Այս վայրը չպետք է շփոթել նույն անունը կրող մի այլ վայրի հետ։ Այս երկրորդ Խալոնիտիսի դիրքը որոշվում է Խալա քաղաքի տեղադրումով Զագրոսի լեռնաստանում։ Այս Խալոնիտիսը, ըստ երևույթին, գտնվել է Տիգրիսի վտակ Սիլլայի (Դիալայի) ավազանում։ Այսպիսով, Խալոնիտիս է կոչվել Խալա քաղաքի շրջանը՝ գավառը։

39. Համաձայն Խարադր Քարակացու 15 սքոյնոսի (որը համապատասխանում է 37,5 մղոնի) վրա գտնվում էր հելլենիստական Խալա քաղաքը (Սելևկիայից 120 մղոն հեռավորության վրա)։ Եթե դա համեմատենք ժամանակակից ճանապարհի հետ, ապա այդ տարածությունը բերում է դեպի Կասր-ի-Շիրին։ Այդ տեղանքում և դրա մոտակայքում հնությունները երկարաձգվում են բավական մեծ հեռավորության վրա և տարբեր ուղղություններով։ Կ. Մասոնի վկայությամբ, այնտեղ պահպանվել են պատերի որոշ մասը, քարաշեն ջրմուղ, պալատանման շենքի մնացորդներ և այլն։ Այս տեղանքում շրջող շինությունների մնացորդների առկայությունը ենթադրել է տալիս, որ այդ ամենը ավելի ուշ ժամանակաշրջանի կառուցվածքներ են, քան հելլենիստական Խալա քաղաքի գոյություն ունենալու ժամանակաշրջանը (C. Masson, Illustration of the Route from Seleucia to Apobatana, as Given by Isidorus of Charax, „Journal Asiatic Society", 1845, v. 12, էջ 98—99)։ Կ. Մյուլլերի վկայությամբ, Խալա քաղաքը այժմյան Հալվան կամ Հոլվանն է (K. Muller, նշվ. աշխ., էջ 250), որը գտնվում է Կասր-ի-Շիրինից ոչ մեծ հեռավորության վրա։

40. Զագրոսը Փոքր Մեդիայի արևմտյան սահմանն է կազմում։ Կարինա քաղաքի ճիշտ տեղադրումը հնարավոր է դարձնում ավելի ճիշտ որոշելու Փոքր Մեդիայի դիրքը։ (Մեդիայի մասին ավելի մանրամասն տե՛ս Plin., VI, 29, 114)։

41. Կարինա անվանումը պահպանվել է այժմյան Կերենդ բնակավայրի անվան մեջ։ Այս անվանաձևի նմանությունը Հայաստանում հանդիպող Կարին անվանման հետ մեկ անգամ ևս գալիս է հաստատելու այն փաստը, որ իրանական տեղանունները գոյություն են ունեցել նաև Հայաստանում։

42. Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանի Իրանի վարչական բաժանմանը վերաբերող հետաքրքիր տեղեկություն է պահպանվել «Աշխարհացույցում»։ Ըստ այդ տեղեկության, Քուստի Խորվարան վարչական միավորի մեջ առաջինն այստեղ հիշատակվում է «Մայաշխարհ»-ը, որը արևելապարսկական Mān հին պարսկական Māda-ին է համապատասխանում։ Մարկվարտի ուսումնասիրությունների համաձայն այն համապատասխանել է Իսիդոր Քարակացու նշած Μηδία (ἡ κάτω) և Καταξάνη պարթևական շրջաններին միասին վերցրած (J. Marquart, Eränsahr, nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, էջ 18)։

43. Բապտանան դտնվել է Բեհիստունի մոտ (C. Masson. Illustration..., էջ 105), որը գտնվում է ժամանակակից Կեռմանշահի և Համադանի միջև։ Այստեղ ամենից կարևորն է պատմական տեսակետից Դարեհ Թագավորի (522—486) արձանագրությունը Բեհիստունի ժայռի վրա։

44. Շամիրամի կառույցների մասին մեզ ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Դիոդորոս Սիկիլիացին. «Ասորեստանի թագուհին իր շքախմբով վրան խփեց Բագիստան լեռան մոտ Մեդիայում, որտեղ նա այգի տնկեց 12 ստադիոն շրջագծով, մի բաց տափարակ վայրում, որը ոռոգվում էր աղբյուրով։ Բագիստանը նվիրվեց Յուպիտերին։ Պարտեզի կողմի ժայռերն ունեին 17 ստադիոն բարձրություն։ Նա (Շամիրամը— Է. Դ.) ժայռի ցածր մասում մի հատվածկտրել տվեց և իր սեփական պատկերը այնտեղ փորագրեց իր հարյուր պահապաններով շրջապատված, ապա ժայռի վրա արձանագրություն փորագրվեց» (Diod., II, 13, VII, 110)։

45. Իսիդոր Քարակացու մոտ հիշատակվող Մեդիաներից «Վերին (կամ բարձր) Մեդիան» կենտրոնական դիրք է գրավում։ Այստեղ էր գտնվում Մեդիայի մայրաքաղաք Էկբատանան, երբեմնի հզոր Մեդական (Մարական) աշխարհակալության կենտրոնը։ Հերոդոտը մեդական պետության հիմնադիր է համարում Դեյովկեսին (Herod., I, 98)։

46. Կոնկոբարը հունական տառադարձությունն է իրանական «Կանգավար» տեղանվան, որը այժմ կոչվում է Կենգավեր։ Տաճարի ավերակները առկայությունը ժամանակակից քաղաքում գալիս է հաստատելու Իսիդորի վկայությունը այդ սրբավայրի մասին։ Հայաստանի Անձևացիք գավառի Կանգուարը համահնչյուն է այս Կոնկոբարին։

47. Բազիգրաբանին նման անվանումների ստուգաբանությունը տրվել է Դյակոնովի և Լիվշիցի կողմից։ Βάζ — նրանք բացատրում են «հարկեր բերող» և ապա ավելացնում են, որ այդ ավելի շուտ համապատասխանում էր տաճարային տիպի հարկերին (И. М. Дьяконов, В. А. Лившиц, Парфянский архив из древней Нисы, «Вестник древней истории», 1953, № 4, էջ 128)։ Այժմյան քարտեզի վրա այդ նույն տարածությունը համապատասխանում է Խոսրովաբադ քաղաքին։

48. Ադրապանա ամրոցը, որը նաև Պարթև Արշակունիների նստավայրն էր, գտնվում էր Էկբատանայից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա։ Ադիաբենը և Ատրպատականը նվաճելուց և իր իշխանությանը ենթարկելուց հետո (Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. Ա, էջ 150) Տիգրան Բ-ը հասավ Էկբատանա մայրաքաղաքը և այրեց Ադրապանանը, որը Էկբատանայի մոտ էր գտնվում։

49. Բատանա անունը Էկբատանա կամ Ագբատանա անվան աղճատված ձևն է։ Էկբատանան, ինչպես վերևում նշեցինք, Մեծ Մեդիայի մայրաքաղաքն էր։ Ստրաբոնի վկայությամբ, Մեդիայի թագավորները այստեղ միայն իրենց ամառն են անցկացրել, իսկ ձմռանը վերադառնում էին Բաբելոն (Strabo, XI, 13, 1 և 5)։

Իսիդորի հիշատակությունը գանձերի վերաբերյալ հաստատվում է Ստրաբոնի այն վկայությամբ, որ Էկբատանայում գանձերի գումարը, ըստ տարբեր լուրերի, հասնում էր մոտ 18 հազար տաղանդի (Strabo, XV, 3, 9)։

50. Սա Մեդիայի մի մասն էր, որն ըստ իր վարչական կենտրոնի անվանվել է Ռագիական։

51. Ոչ մի տվյալներ չկան, որ քաղաքը հունական ծագում ունի, այլ հակառակը, այն ավելի վաղ շրջանի հիմնադրման է պատկանում։ Ավեստայի Վիդևդատի առաջին գլխում, որ կազմվել է ավելի վաղ ժամանակաշրջանում, քան Զարատուշտրայի ժամանակաշրջանը (7—6 դդ. մ. թ. ա.) Ռագան հիշատակվում է 16 այլ երկրների հետ միասին (М. М. Дьяконов, Очерки..., էջ 361)։ Հետևապես այս դեպքում տեղական անվանումը հունականացված ստուգաբանության է ենթարկ-

վել։ Ռագայի (հետագա արտասանությամբ՝ Ռեյ) ավերակները գտնվում են ժամանակակից Ռեյ բնակավայրի մոտ։

52. Մարդերը իրանական ցեղերից էին։ Ստրաբոնի տվյալներից հետևում է, որ մարդերը բնակվել են Իրանին հյուսիս-արևելքից հարևան շրջաններում, սակայն նրանց տեսնում ենք նաև Հայաստանում և այլուր։ Մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, մարդերը և մի քանի ուրիշ լեռնական ցեղեր էկբատանայի թագավորներին ստիպում էին իրենց հարկ վճարել, սակայն Ալեքսանդրը հարձակվեց նրանց վրա և վերջ տվեց նրանց հանդգնությանը (Strabo, XI, 13, 6)։ Ֆրիպատի (մ. թ. ա. 191—176 թթ.) որդի Հրահատ Ա-ն (մ. թ. ա. 176—171 թթ.) պատերազմել է էլբուրս լեռան մոտ գտնվող լեռնցիների դեմ (М. М. Дьяконов, Очерки..., էջ 182)։ Ըստ երևույթին նա մարդերին այս կարևոր անցուղու մոտ պահում էր որպես պահապան ջոկատ։

53. Ստրաբոնի մոտ այս անունը հանդիպում է Χωαρηνή ձևով։ Այս երկիրը Կոմիսենի հետ միասին մտնում էր պարթևական պետության մեջ (Strabo, XI, 9, 1)։ Պլինիոսի մոտ Choara ձևն է հանդիպում (Plin., VI, 17, 44)։ Շրջանի ժամանակակից անունը Խովար է։

54. Ստրաբոնը այս քաղաքը հիշատակում է մի շարք հունական քաղաքների հետ (Strabo, XI, 13, 6)։

55. Պառները մ. թ. ա. 235 թ. Արշակի ղեկավարությամբ գրավում են Հիրկանիան (Վրկանը) և Կոմիսենեն (М. М. Дьяконов. Очерки..., էջ 181)։

56. Հիրկանիայի (հայերեն՝ Վրկան) մասին Ստրաբոնը գրում է, որ այն բերքով առատ երկիր էր (Strabo, II, 1, 14)։

57. Պարթևական պետության հիմքը դրվեց մ. թ. ա. III դարում։ Տրդատ Ա-ի (247—211) օրոք և նախնական ժամանակաշրջանում դրա կորիզն էին կազմում Պարթիենան (Նիսա կենտրոնով), Ասպավարկտիկենեն և Աստավենեն։

58. Ըստ գրական ավանդության, Պարթևների պետության հիմքը դրել են պառները (Ἄπαρνοι), որոնք Քսանթների (Ξάνθοι) և Պիսուրների (Πισσούροι) հետ միասին կազմում էին Դահների միությունն և քոչվորական կյանք էին վարում Օքսոս գետի և Կասպիական ծովի միջև (Strabo, XI, 8, 2)։ Մ. թ. ա. IV դարի վերջում պառները անջատվեցին մնացած երկու ցեղերից և Արշակի ղեկավարությամբ եկան Պարթիա (հայերեն՝ Պարթևք), որտեղ նրանք ղեկավարեցին ժողովրդական ապստամբությունը՝ ուղղված նախկին Սելևկյան նահանգապետի, իսկ այդ ժամանակ արդեն ինքնուրույն տիրակալի դեմ։ 247 թ. մ. թ. ա. Ասսակում, որը Աստավենի գլխավոր քաղաքն էր, պառները Արշակին (կամ Տրդատ Ա-ին) հայտարարեցին իրենց թագավորը։ Այս բանը հաստատելու է գալիս նաև Նիսայի փաստաթղթերում հանդիպող վկայությունը Արշակ Ա-ի մասին (И. М. Дьяконов, и В. А. Лившиц, Парфянские документы..., էջ 20)։

59. Կ. Մյուլլերի (Graec. Minor.) քարտեզի վրա Պարթիայի տեղադրումը չի համապատասխանում պատմական գիտության նորագույն տվյալներին։ Մեր աշխատությանը կցված քարտեզում մենք կատարում ենք որոշ ճշտումներ։

60. Մինչև մայրաքաղաքը Հեկատոմպիլոս տեղափոխվելը Նիսան է եղել (կամ ինչպես հելլեններն են անվանում՝ Նիսայա) պարթևների երկրի կենտրոնը։ Իսիդորի այն վկայությունը, որ այստեղ է գտնվել թագավորական դամբարանը, արժանի է ուշադրության և ապացուցվում է պեղումներով։ Այստեղ են թաղվել պարթևական առաջին թագավորները։

Հին Նիսայի պեղումները կատարվում են Աշխարագից 18 կմ հյուսիս-արևմուտք, այժմյան Դագիր բնակավայրի մոտ բնկած տեղամասում։

61. Դաթարը գտնվել է XIX դ. Անաու բնակավայրի մոտ։ Այն եղել է ոչ մեծ քաղաք բարձունքի վրա և զբաղեցրել է իր մերձակայքով 9 հեկտար տարածություն (М. Е. Массон, Народы и области южной части Туркменистана в составе Парфянского государства. «Труды Южно-Туркменской Археологической комплексной экспедиции»; այսուհետև՝ Труды ЮТАКЭ, 1955. т. V, էջ 23)։

62. Սիրոկը ամրացված քաղաք է եղել, սակայն ավելի փոքր, քան նախորդը։ Նրա ավերակները գտնվում են ժամանակակից Դյաուրս բնակավայրի մոտ (М. Е. Массон, նշվ. աշխ.)։

63. Պլինիոսի մոտ այն կոչվել է Ապավորտենեն. A Caspiis ad orientem versus regio est Apavortene (Plin., VI. 18, 46)։ Ժամանակ առ ժամանակ Ապավորտենեն Պարթևաց աշխարհի հետ կազմել է մեկ սատրապություն, սակայն Իսիդորի ժամանակ այն եղել է առանձին սատրապություն։ Պտղոմեոսը այն հիշատակում է Παραστακηνή ձևով։ Նա այստեղ հիշատակում է մի քաղաք ևս Ἀστάκανα անունով (Ptol., VI, 5, 1 և 5, 4), որը, ըստ երևույթին, Իսիդորի նշած Ապավարկտիկի քաղաքն է։

64. Ապավարկտիկենեի գլխավոր քաղաքը՝ Ապավարկտիկեն, գտնվում էր ժամանակակից

Կասխկա կայանից երեք կիլոմետր հյուսիս-արևելք և համապատասխանում է Բյոհնե-Կասխկայի փլատակներին։ Ապավարկտիկեի հզոր ամրոցը իրենից ոչ ճիշտ քառանկյունի է, տարածությամբ ավելի քան 33 հեկտար (Труды ЮТАКЭ, 1951, т. II, *էջ 27)։*

65. Դեպի Մարգիանա տանող ճանապարհի հաջորդ կայանները գտնվում էին Ռագայում և երկու գյուղերում, որոնց միջև տարածությունը կազմում էր մոտ 30 կմ։ Այս բնակավայրերը ունեցել են ինչպես բնական պաշտպանություն, այնպես էլ պատնեշանման կառուցումներ, որոնց ետևում բնակիչները պաշտպանվում էին քոչվոր ցեղերի հարձակումներից (Труды ЮТАКЭ, 1955, т. V, *էջ 24)։*

*66. Ստրաբոնի վկայությամբ, Արեան և Մարգիանան Ասիայի այս մասի ամենից հզոր երկրներն են եղել (*Strabo, *XI, 10, 1)։*

67. Անտիոքը եղել է Մարգիանայի գլխավոր քաղաքը (տե՛ս Ptol., I, 12, *7*; Plin, VI, 18, 47)։ *Անտիոքի* Ἔνυδρος *(«ջրով առատ») անվանումն ունի իր յուրահատուկ իմաստը, դրանով ընդգծվում է նրա հարմարավետ տեղադրությունը բազմաթիվ ջրանցքների միջև։ Անտիոքը գտնվում էր այժմյան Մարի քաղաքից շուրջ 20 կմ դեպի արևելք գտնվող Մարվ քաղաքի ավերակների տեղում։ Ուժեղ ամրացված ամրոց է եղել։ Քաղաքի կենտրոնում բարձրանում էր հզոր բազմաշտարակ միջնաբերդը այժմ էրկ-կալը* (История Туркменской ССР, 1955, Ашхабад, т I, *էջ 90)։ Մ. թ. ա. 175 թ. Արեան միացվեց Հունա-Բակտրիական թագավորությանը՝ Դեմետրիոս Ա-ի կողմից (*М. М. Дьяконов, Очерки..., *էջ 187)։ Մ. թ. ա. 140—130 թթ. այս թագավորության կործանումից հետո Արեան նորից դառնում է պարթևական սատրապություն։ VII դ. «Աշխարհացոյցի» մեջ Արեան հիշատակվում է «Հրեւ» ձևով։*

68. Արեայում Պտղոմեոսը 36 քաղաքների և գյուղերի անուն է տալիս։ Իսիդոր Քարակացու Κανδάκ, Ἀρτακαυαν *(համա* Artacoano, Plin., VI, 25, 93); Ἀλεξάνδρεια ἐν Ἀρείοις *(համտ.* Plin., VI, 29, 116) *քաղաքներին համապատասխանում են Պտղոմեոսի* Ἀρτακαύανα, Ἀλεξάνδρεια, Κοτάκη *քաղաքները* (Ptol., VI, 17, 4—8)։ *Այժմ Քանդակ անունով մի քաղաք կա պատմական Արեայի հարավային մասում։*

69. Այս շրջանը կազմել է Արեայի հարավային մասը, որը երկարաձգվել է հյուսիսից հարավ մինչև Զարանգիանա։

70. Փրա քաղաքը (հմմտ. Φοραζάνα — Ptol., VI, 19, 5) *համապատասխանում է այժմյան Ֆառահ քաղաքին։ Ալեքսանդրը Փրա քաղաքում էր գտնվում, երբ իմացավ իր դեմ ուղղված դավադրության մասին*

71. Բիս (հմմտ. Βιγίς — Ptol., VI, 19, 5), *Գարին (հմմտ.* [illegible] — Ptol., VI, 20,4) *Նիէ քաղաքների տեղադրությունը ստույգ որոշված չէ։ Տեղադրությունը կատարվում է ըստ ուղղության և տարածության։*

72. Զարանգիանա երկիրը (հմմտ. Ζαράγγους — Arrian, VI, 27 *և* Plin., VI, 25, 94) *համապատասխանում է Դրանգիանա երկրին։ Այս երկրի մասին հիշատակություն կա Ստրաբոնի մոտ* (Strabo, XI, 8, 9; *և 10, 1)։*

73. Սակաստան անունը այս երկիրը ստացել է սակ ցեղի անունից։ Մինչև այժմ այդ երկրի անունը պահպանվել է Սիստան անվան մեջ։ Սիստանը գտնվում է այժմյան Իրանի և Աֆղանստանի սահմանի վրա։

74. Այս քաղաքը համապատասխանում է Պտղոմեոսի մոտ հանդիպող Παραιτακηνή *տեղանվանը* (Ptol., VI, *4, 3)։*

75. Բարդա, Մին, Պալակենտի, Սիգալ և Աղեքսանդրիա քաղաքները տեղադրվում են ըստ ուղղության և տարածության։

76. Ենթադրվում է, որ Արաքոսիան գտնվել է այժմյան Աֆղանստանի հարավային մասում։ Արաքոսիայում հիշատակվող քաղաքները տեղադրվում են ըստ ուղղության և տարածության։

77. Աղեքսանդրապոլիսին համապատասխանում է այժմյան Ղանդահար քաղաքը։

«ПАРФЯНСКИЕ СТАНЦИИ» ИСИДОРА ХАРАКСКОГО

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

В публикуемом тексте «Парфянские станции», известном как сочинение Исидора Харакского (конец I в. до н. э.), показана главная торговая магистраль древности, начинающаяся от границ Римской империи у перехода через Евфрат (у Зевгмы) и про-

ходящая через всю державу парфянских Аршакидов вплоть до границ Индии, около которой находилась конечная станция Александрополис (нын. Кандагар). В тексте указаны все дорожные станции и расстояние между ними в схойнах.

Перевод греческого текста на армянский язык выполнен на основе публикации К. Мюллера (K. Müller, Geographi Graeci Minores. Hildesheim, 1965, т. I, стр 244—254).

К статье приложена карта, составленная нами по публикуемому тексту.